




ԲԱՅՐՈՆՆ ՈՒ ԻՐ ԶՈՒՆԸ

•••••

Թարգմանեց
Ա.թ. Խնկոյեան

Յանելյան «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս.
Տպարան Ե. Աղանեանի, Պոլից. 7
1915

82-93

P-31

„ՆՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ Խմբագրութեամբ
«ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուկ—Ամիրան Դարեշանիձէ, փոխ. Ա.թ. 25 Կ.
2. Մէյրի—Դերձակի աշակերտը, վօղըւիլ 10 »
3. Ազէւն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերագարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Գալաշեան—Կապիկներ, բնագիտ. զրոյց 10 »
5. Մարկ Տէլն—Մահաւան օղակը. պատմաւածք,
Թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիսլավիչ—Պատիկ նաւաստին. պատ-
մըւածք, Թարգ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան — Երեք խրատներ
Պղնձէ քաղաքի զրոյցներէց 20 »
8. Է. Սէտոն-Տոմպարն — Վերնիպեդի գայլը.
պատմ. հերոս կենդանիների կեանքից, Թարգ.
Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Ջիլքերտ — Առասպելական
հերոսներ. Թ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուբէն Դարբիշեան—Ովկիանի Թագաւորը.
Կէտի մասին, բնագիտական զրոյց 10 »
11. Մարգակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-
պետը. Իտալական հեքիաթ. Ռուսերէնից,
Թարգ. Յովհ. Թումանեան 10 »
12. Խ. Բ. Բարայեան—Նոր ընկերունի, Մանկա-
կան պիէս, մէկ արարւածով: 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպողը, արեւելեան աւանդ. 10 »
14. Փր. Փօկս—Մի ժամայ նախարարը, պատ-
մաւածք Թարգ. Ա.թ. Խնկոյեանի 15 »
15. Զիպօն եւ Պիպօն 25 »

„ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“ ՀԵԿԵՐԱՐԱԿ
Հրատարակութիւն № 28

82-03+92

Բ-26

սր.

ԲԱՅՐՈՆՆ ՈՒ ԻՐ ՀՈՒՆԸ



Թարգմանեց
Ար. Խնկոյեան

1005
222534

h. N° 185


1926

Յանելաւ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

○○○●○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Ն. Աղաւանի, Պոլից. 7

1915



01.03.2013

497



ԲԱՅԻՐՆ



ԲԱՅՐՈՆՆ ՈՒ ԻՐ ՇՈՒՆԸ:

Բայրոնը — անգլիայի ամենամեծ բանաստեղծներից մէկը. — ծնւել է Լոնդոնում 1788 թ.: Նրա անունն էր Գէորգ-Գորդոն Բայրոն: Նա դեռ մանուկ ժամանակից շատ բարի և քաղցր բնավորութիւն ունէր, բայց միևնոյն ժամանակ շատ դիւրագրգիռ էր: Չէր սիրում, երբ իրեն նկատողութիւն էին անում, և այդ պատճառով յաճախ վիճում էր իր դայեակի հետ, որ մի պառաւ շողանդացի կին էր:

Նրկար ժամանակ Բայրոնին կանացի շոր էին հագցնում, բայց նա շատ շարժուն երեխայ լինելով՝ բաւականին փրնթի էր, կեղտոտում և պատառոտում էր իր շորերը: Միանգամ նա պատառեց իր վրայի բոլորովին նոր շրջագգետը: Դայեակը տեսաւ պատռածը և ասաւ.

— Այս ի՞նչ է, ի՞նչպէս կարելի է շորը պատռել, ամօթ է, ամօթ. դու չար տղայ ես:

Բայրոնը զայրացաւ, երկու ձեռքով բռնեց իր շորը օձիբից ու վերևից մինչև փեշը պատռեց:

Բայց այդ սովորութիւնը շատ վատ սովորութիւն էր: Նա ինքն էլ հասկացաւ, գլուխը կախեց և քարացածի պէս անշարժ կանգնեց սենեակի մէջ և համբերութեամբ տարաւ դայեակի և մօր նախատինքները:

Բայրօնը շատ էր սիրում իր դայեակին Մայ-Գրէին: Ամբողջ ժամերով հանգիստ նստում էր, ուշադրութեամբ լսում էր դայեակի պատմածները հին ժամանակներից:

Շոտլանդիան, դայեակի հայրենիքը, հին ժամանակ անկախ երկիր էր. սարերում ապրում էին ռազմիկ և համարձակ մարդիկ: Նրանք շարունակ կռիւ էին անում իրենց հարևանների հետ, և այդ պատճառով էլ ժողովրդական աւանդութիւնները շատ երգեր ու պատմութիւններ էին պահել լեռնական շոտլանդացիների պատերազմներից և արշաւանքներից: Մայ-Գրէյը որպէս իսկական շոտլանդացի, հին ժամանակներից շատ պատմութիւններ գիտէր և սիրով հաղորդում էր իր սանիկին: Բայրօնը չէր քնում, մինչև որ դայեակը նրան մի բան չը պատմէր կամ մի երգ չասէր:

Բայրօնը այդ լեռները դեռ չը տեսած, այդ պատմութիւնների միջոցով արդէն ծանօթ էր նրանց:

Բայրօնի մայրը մի չքաւոր կին էր: Բայրօնը ընդամենը չորս տարեկան մի մանուկ էր, երբ որ մայրը Լոնդոնից տեղափոխեց Շոտլան-

դիայի Աբերդին քաղաքը, որտեղ 11 տարեկան Բայրօնին տւին դպրոց:

Բայրօնը մի շատ սիրուն մանուկ էր, աչքերը գեղեցիկ և խելացի, մազերը գանգուր, ոլորուն. նրան հագցնում էին լեռնական շոտլանդացու զգեստ—կարճ շրջագգեստ, սրունքները մերկ, կարճ բըկերով գուլպա և կօշիկ: Նրա գլխարկի վրայ արծաթ փետուր էր կարած: Այդ զգեստը աւելի էր գեղեցկացնում նրա դէմքը: Բայց նա ծնած օրից մի պակասութիւն ունէր. մի ոտը ֆլասւած էր: Նրան երկար ժամանակ բժշկեցին, կապեցին, մեքենայ հագցրին, բայց չեղաւ, ոտը չըլաւացաւ և Բայրօնը իր ամբողջ կեանքում կաղ մնաց:

Դեռ շատ փոքրուց Բայրօնը զգում էր թէ ինչքան անախորժ է այդ պակասութիւնը: Նա ուրիշ մանուկների նման այնպէս արագ չէր կարող վազել և ամենից վատն այս էր, որ ասում էին թէ՝ «ինչ գեղեցիկ երեխայ է, բայց ափսոս որ ոտը այդպէս է»:

Այդ ժամանակ նա կարմրում էր, աչքերը վար կախում և երբեմն էլ բարկանում էր: Այդ պակասութեան գիտակցութիւնը նրան մարդկանցից հեռացրել էր: Նա յաճախ ամբողջ ժամերով մեն-մենակ խաղում էր, իսկ երբ որ աւելի մեծացաւ, կամ դաշտ էր գնում, կամ անտառ ու սար, այնտեղ թափառում էր: Նա սիրում էր լեռնային բնութիւնը և յետագայում

հիացմունքով էր խօսում այդ զբօսանքների մասին: Դժար և անտանելի լեռնային շաւիղներու մ'սովորեց շատ և երկար ման գալ, պնդացրեց իր թոյլ ոտը, ամրապնդեց և դարձաւ համարձակ և ձեռներէց:

Երբ նրա ութը տարին լրացաւ, զբօսանքներն էլ երկարատե դարձան: Դպրոցից ազատ օրերը նա սարերու մէջ էր անց կացնում: Նրա մշտական ընկերն էր իր շունը— Ռայլֆը: Ռայլֆը մի ուժեղ, կատաղի շուն էր, բայց Բայրոնի վերաբերմամբ շատ համեստ էր, սիրում էր նրան և պատրաստ էր պատառոտել ամեն մէկին, ով կը համարձակէր կպչել երեխային կամ վիրաւորել նրան:

Բայրոնն էլ սիրում էր իր շանը: Նա ինքն էր ամեն օր նրան կերակրում: Ծինել էր նրա համար մի տախտակէ տնակ, շատ անգամ ինքն էլ էր մտնում այնտեղ և երկար ժամանակ անցկացնում շան հետ: Ռայլֆը՝ սարեր զբօսանքի գնալիս՝ միշտ ուղեկցում էր փոքրիկ Բայրոնին: Հենց առաջին նշանին նա դուրս էր թռչում տնակից և գնում էր նրա հետ սարերը:

Մի անգամ փոքրիկ Բայրոնը ուզեց մի մեծ զբօսանք կատարել: Արևը դեռ ծագելու վրա էր, նա սուս վեր կացաւ, հագնեց, մատների վրա դուրս եկաւ պատշգամբ, կանչեց Ռայլֆին և երկուսով ուրախ-գլարթ գնացին: Բայրոնն այս անգամ ուզում էր շատ հեռու գնալ դէպի

Դի գետի հոսանքը, դէպի Զաւերկինդու կիրճը: Նա ուզում էր հասնի Դի ջրվէժը: Մի անգամ նա մօր հետ եղել էր այնտեղ, այս անգամ էլ ուզում էր մենակ գնար:

Մինչև ջրվէժին հասնելը, նա պէտք է բարձրանար շատ դիք-դիք ժայռեր: Սկզբում ամեն բան լաւ էր գնում, Բայրոնը ժիր քայլում էր, Ռայլֆը նրա ետևից և նրանք հասել էին համարեա վերին գագաթը, երբ մէկ էլ մշուշը ծածկեց սարը:

Շոտլանդիայի սարերում յաճախակի մառախուղ է լինում և այնպէս թանձր, որ երկու քայլի վրա ոչինչ կարելի չի լինում տեսնել: Բանն այն է, որ մառախուղը անսովոր կերպով արագ է առաջ գալիս: Երբեմն, տեսնում ես, երկինքը պայծառ է, օրը լաւ, մէկ էլ բարձրանում է մառախուղը, և մի երկու-երեք րոպէի մէջ երկինքը այնպէս կը մթնի, ինչպէս գիշերը, և երկու քայլի վրա աչքիդ առաջը ոչինչ չես տեսնի:

Այդպիսի մի մառախուղ վայրկենապէս բռնեց Բայրոնին. նա մի րոպէ կանգ առաւ, չըզիտէր— շարունակէր ճամփէն թէ ետ դառնար: Բայց նա յիշեց իր Մայ-Գրէի պատմածքները քաջ լեռնականների կեանքից և ասաւ. «Ես նրանցից ինչով եմ պակաս. ես էլ ամեն տեսակ եղանակին սարերը ման կը գամ»:

Նա մի քանի քայլ արաւ, բայց հիւանդ ոտը

խճճւեց խոտերի մէջ, նա կորցրեց իր հաւասարակշռութիւնը և ընկաւ, յուսահատական ճիչ արձակելով: Նա այնպէս իմացաւ թէ թռչում է անդունդը: Ռայլֆը վրա հասաւ և երկուսով կորան մշուշի մէջ:

Բայրոնի մայրը զարթնեց իր սովորական ժամին, վեր կացաւ և իմացաւ Մայ-Գրէյից, որ իր որդին արդէն վաղուց է որ տանը չէ, գնացել է Ռայլֆի հետ սարերը ման գալու:

Բայրոնը յաճախ ամբողջ օրով տանը չէր լինում և դրա համար էլ նրա բացակայութիւնը շանհանգստացրեց մօրը: Նա ամբողջ օրը զբաղւած էր իր գործով, հիւր գնաց և երեկոյեան դէմ տուն եկաւ, բայց որդին չըկար: Մայ-Գրէյը շատ էր որոնել, բայց Բայրոնին չէր գտել: Անհանգստութիւնը քանի գնաց աւելի սաստկացաւ և երբոր գիշերն էլ Բայրոնը չեկաւ, մայրը սկսեց յուսահատել:

Հարևանները և քաղաքացիներից շատերը կարեկցութիւն ցոյց տւին, լապտերները վառեցին, ցրւեցին շրջակայքը երեխին ման գալու համար: Տիկ. Բայրոնն ու Մայ-Գրէյը ծառայի հետ լապտերները վառած սարերը գնացին, Բայրոնի սիրած տեղերը, շարունակ կանչում էին, Բայրոնի ու Ռայլֆի անունն էին տալիս, բայց նրանց միայն պատասխանում էր սարերի արձագանքը: Դամին, որ հնչում էր ժայռերի ճեղքածքներում, կարծես թէ ձայնակցում էր

նրանց և դեռ այստեղից-այնտեղից էլ շառաչում էին ջրվէժները, որոնց թիւը այնքան շատ է այն կողմերում:

Մի քանի ժամ անօգուտ թափառելուց յետոյ վերջը տիկ. Բայրոնը յոգնած և հոգեպէս տանջւած վերադարձաւ տուն: Նա յոյս ունէր թէ որդին վերադարձած կըլինի, բայց այդպէս չէր: Վերադարձան և հարևանները և ծանօթները ու ասացին թէ չըգտան ոչ փոքրիկ Գէորգին և ոչ շանը:

Ամբողջ գիշեր տիկին Բայրոնը աղօթում էր ու լալիս:

Առաւօտեան, հենց որ օրը լուսացաւ, նորից բոլորը գնացին դէպի սարերը: Մի մասը գնաց ծովի ուղղութեամբ — յիշեցին որ մի անգամ նրան այնտեղ էին գտել: Այն ժամանակ էլ նա ինքնագլուխ, առանց բան ասելու, տանից գնացել էր: Նրան ման էին եկել և չէին գտել: Պատահմամբ Մայ-Գրէյի ծանօթներից մէկը գնացիւ է եղել դէպի ծովափնեայ ճահիճը, լսել էր փոքրիկ Գէորգի ձայնը, եկել տեսել էր, որ նա թաղւել է ցեխի մէջ մինչև գոտին և, ազատել էր նրան: Այս դէպքը յիշեցին նրանք և ոչ թէ միայն սարերում ման եկան տղային, այլ և ճահիճներում:

Տիկ. Բայրոնի տանը միայն փոքրիկ հովիւն էր մնացել. նա կանգնել էր դռն առաջ և իրեն համար զւարճանում էր: Յանկարծ տեսնում է, որ

Ռայլֆը վազում է, յոգնած և լեզուն բերանից դուրս գցած։ Հովիւը վազում է նրա առաջ, կանչում է, բայց շունը ուշադրութիւն չէր դարձնում նրա վրա, ուղղակի վազեց մտաւ խոհանոցը։ Հովիւը ետեից եկաւ ու ասաւ.

— Ի՞նչ, բարեկամս, քաղցած ես. արի ես քեզ կերակրեմ։

Նա հանեց հացի կտորը ու գցեց շան առաջը և ասաւ.

— Կեր, քեզ հալալ լինի, միայն թէ ասա՛ հէր է փոքրիկ պարոնը։— Մի տես՝ ինչպէս են նրան որոնում։

Շունը խլեց հացի կտորը, պոչը շարժեց ու փախաւ։ Հովիւը ընկաւ նրա ետեից, կանչում էր նրան, անունն էր տալիս, բայց շունը կանգ չառաւ, մինչև անգամ ետ չը նայեց և շուտով աչքից կորաւ։

Տիկ. Բայրոնը գեռ էլի որոնում էր որդուն, ոտները սուր-սուր քարերին էր խփել և չափազանց յոգնել էր և այլևս չըկարողանալով դիմանալ՝ վերադարձաւ տուն։ Մայ-Գրէյի ձայնը բոլորովին կարել էր, նրա աչքերը արտասուքից ուռել էին։ Երկուսով էլ վերադարձան տուն, որ քիչ հանգստանան, ուժերը հաւաքեն, նոր ուժերով կրկին գնան փնտռելու։

Փոքրիկ հովիւը պատմեց նրանց Ռայլֆի գալը և հաց տանելը։

— Շունը կենդանի է, — բացականչեց տիկ.

Բայրոնը, — կարելի է որ իմ Գէորգն էլ կենդանի է։ Տէր Աստած, կըլինի որ գտնեմ իմ Գէորգին։

Խեղճը ուզում էր նորից գնար իր որդուն փնտռելու, բայց ուժերը դաւաճանեցին նրան և անզգայ ընկաւ գետին։ Վախեցած Մայ-Գրէյը նրան սենեակ տարաւ, դրեց անկողնու վրա և նրան ետ բերելու համար ամեն տեսակ միջոց գործ դրեց, բայց երկար ժամանակ չէր կարողանում ուշքի բերել։ Մի առ ժամանակից յետոյ շունը նորից եկաւ, նրա ուրախ հաչոցը և Մայ-Գրէյի բացականչութիւնները տիկնոջը ուշքի բերին։

Նա յարձակեց Ռայլֆի վրա. շոյեց նրան, գլուխը սեղմեց իր կրծքին և բացականչեց.

— Սիրելի Ռայլֆ, ասա, որտեղ է Գէորգը, որտեղ է նա։

Ռայլֆը չէր կարողանում պատասխանել, բայց նրա խելացի աչքերը ուրախութիւնից փայլում էին և նա շարժում էր պոչը։

Տիկ. Բայրոնը հրամայեց, որ սուպ ու հաց բերեն և իր ձեռքովը տուաւ Ռայլֆին։ Նա մի քանի անգամ ագահաբար լկեց սուպը, բայց չը կերաւ և նորից սկսեց պոչը շարժել և աչքը գցել հացին։

— Սուպ չէս ուզում։ Հաց ես ուզում, հա՛.

Նա հաց տուաւ շանը։ Շունը խլեց հացը և ուզում էր վազել, բայց տիկ. Բայրոնը նրան կանչեց։ Շունը կանգնեց։

— Ես նրա ետևից կը գնամ, նա կըտանի ինձ իմ Գէորգի մօտ:

— Նա կենդանի է, կենդանի, — ասում էր տ. Բայրոնը:

Տիկ. Բայրոնը տեղից վեր թռաւ և գնաց: Հէնց որ շուներ նրա գալը նկատեց, թռիչք տալով ետ եկաւ նրա մօտ և փեշերին քսեց, կարծես թէ շնորհակալութիւն էր յայտնում գալու համար: Այն ժամանակ, երբ որ շուներ վեր վեր էր թռչկոտում, տիկ. Բայրոնը նկատեց, որ նրա վզնոցին տոմսակ է կապւած — իսկոյն բռնեց վզնոցից, տոմսակը ետ արաւ և տեսաւ այնտեղ իր որդու նամակը:

«Սիրելի մայրիկ, հանգստացիր, ես դեռ կենդանի եմ: Երէկ ես գնում էի սարերը, մառախուղ եղաւ, ոտս խճճեց թուփի մէջ և չը գիտեմ ինչպէս ես ընկայ անդունդը: Ես կը ջարդէի, բայց Ռայլֆը բռնեց շորերիցս, ես մի ինչ որ բանի կպայ և կախեցի անդունդի վրա. ձեռքերով էլ մի բանից բռնեցի և այնպէս մնացի: Երբոր մառախուղը քաշեց և ես շուրջս նայեցի, տեսայ որ մենք կախւած ենք մի սուկալի խորութեան գլխին: Ես ուզում էի վեր բարձրանայի, բայց չը կարողացայ: Այն ժամանակ արմատները ու քարերը բռնելով իջայ ձորի յատակը: Հիմա ես այնտեղ եմ և չեմ կարողանում դուրս գամ: Ամբողջ գիշերը ես լաց եղայ: Գիտեմ որ դու ինձ համար կանհանգստանաս: Ես մըսում էի, բայց Ռայլֆը ինձ

տաքացրեց: Այսօր ես քաղց զգացի, Ռայլֆն էլ սոված էր: Յանկարծ նա վերկացաւ, ճանկոտելով դուրս եկաւ անդունդից: Ես կարծում էի թէ շուներ ինձ անտէր թողեց ու գնաց: Դառնապէս լաց եղայ: Բայց մի ժամից յետոյ իմ սիրելի Ռայլֆը ետ եկաւ և ինձ համար հաց բերեց: Ես հացից իմացայ, որ շուներ տուն է եկել: Բերածը մեր հացն էր: Մենք նրա հետ հաւասար կիսեցինք: Ռայլֆը էլի է ուզում տուն գնալ: Ինձ մօտ թուղթ ու մատիտ կար, ես գրում եմ քեզ, որ դու հանգիստ լինես: Շան վզնոցից նամակը կապելու համար իմ թաշկինակս պատռեցի, ներիր: Եթէ նամակը ստանաս, եկ Ռայլֆի ետևից, նա քեզ կըբերի ինձ մօտ:

Քո անհնազանդ, բայց զղջացող որդի
Գէորգ Բայրոն»

— Մայ-Գրէյ, Գէորգը կենդանի է, նա տոմսակ է գրել. որքան կարելի է շուտ, բարեկամներս: Ազատենք նրան:

Տիկ. Բայրոնը, Մայ-Գրէյը և մի բանւոր գնացին շան ետևից, որ հացը բերանին առաջ էր վազում: Ճամփին մայրը բարձրաձայն կարդում էր նամակը: Նրանց միացաւ մի լեռնական: Մի ժամ-ժամուկէսից յետոյ նրանք հասան ջրովէժին: Ռայլֆը կանգնեց: Ափերի եզրերը համարեա իրար էին առել, բայց քանի խորն ու հեռուն էիր իջնում, աւելի լայնանում էին և կորչում էին անհասանելի խորութեան մէջ, որ-

տեղ հեղեղն էր թշնամ և փրփրակալում: Այդ տեղի միայն տեսքը սարսափ էր ազդում, եթէ այդտեղից էր գլորւել մանուկը, մահը անխուսափելի էր: Բայց Ռայլֆը մի կողմ քաշեց, հաշեց և զառիվայրով ցած վազեց: Նա միայն իր ճանկերի շնորհիւ կարողացաւ ցած իջնել: Մարդ չէր կարող այնտեղ ոտ դնել:

Երբոր Ռայլֆը ընկաւ խորխորատը, տիկ. Բայրոնն ինքն էլ ուզեց նրա ետեւից ընկնել, բայց լեռնականը բռնեց նրան և սառնութեամբ ասաւ:

— Կանգնեցէք, այդ ուր: Մի անբախտութիւնը հերիք չէ. ուզում էք ձեզ սպանել և ձեր որդուն ո՞րք թողնել:

Մայրը ընկաւ անդունդի եզրին և սկսեց ինչքան ուժ ունէր կանչել որդուն: Որդին էլ այն կողմից ձայն տւաւ. հիմա իմացան նրա տեղը. ֆնում էր որ այնտեղից նրան դուրս հանէին: Լեռնեցին մօտեցաւ անդունդի բերանին, պառկեց և ուշադրութեամբ զննեց պատերը: Երկար զննելուց յետոյ՝ նա ասաւ.

— Ոչ, անդունդը շատ դիք է: Իջնել կարելի է ձիշտ այնպէս, ինչպէս փոքրիկ պարոնն է իջել, սողալով, բայց վեր բարձրանալ՝ ոչ մի կերպ չի կարելի:

— Ի՞նչ անենք, թողնենք որ երեխան այնտեղ կորչի:

— Ոչ, — պատասխանեց լեռնեցին, — պէտք է

նրան այնտեղից դուրս հանել. միայն թէ թոյլ տւէք որ ես իմ գիտեցածիս պէս կարգադրեմ և ես երաշխաւոր եմ որ նա կազատւի:

— Ասածու սիրուն, արա ինչ որ գիտես, — բացականչեց տիկ. Բայրոնը, — միայն թէ ազատիր իմ որդուն:

— Գնա Աբերդին, — ասաւ լեռնեցին, դառնալով դէպի բանւորը, — հետդ բեր մի հաստ պարան. որքան երկար լինի, այնքան աւելի լաւ: Բարակ պարան էլ բեր, Մի սննդաբար բան էլ բեր, միս, սուպ, ինչ որ կը լինի, դիր ամանի մէջ, բեր:

Բանւորը համարեա վազեց, իսկ լեռնեցին ասաւ.

— Մեր գերին ինքը պէտք է աշխատի դուրս գայ, նրան պէտք է սննդաբար կերակրով կազդուրել:

Յետոյ լեռնեցին մօտեցաւ ձորի եզրին, կռացաւ, պառկեց և սկսեց մանկան հետ խօսել, որը լսում էր և պատասխանում անդունդի խորքից:

— Մի տեղդ հօ չէ՞ վնասւել:


— Ո՛չ:

— Ուժդ տեղն է:

— Ինձ թւում է թէ՛ հա:

— Դու կարո՞ղ ես պարանի վրայով վեր բարձրանաս:

— Կարող եմ:



—Հիմա հանգստացիր և ուժերդ հաւաքիր.

Անցաւ տանջալից սպասումի համարեա մի ժամը: Վերջապէս յայտնեց բանւորը, հետն էլ եկել էին ուրիշ երկուսը: Նրանք բերել էին բաւական հաստ պարաններ, նոյնպէս և բարակ պարաններ, մի աման սուպ, մէջը միս:

Ամանը դրին թաշկինակի մէջ և բարակ թոկով կախեցին անդունդը:

—Կուտես և կրկազդուրւես,—ճշաց լեռնեցին ու ձեռք առաւ հաստ պարանը: Նա իրարից որոշ տարածութեան վրա հանգոյցներ էր անում, մի պարանի ծայրը միւս պարանին էր կապում, այնպէս որ երկարացնում էր պարանը: Վերջապէս ամեն բան պատրաստ էր: Նա պարանի ծայրին մի ծանր քար կապեց և զգուշութեամբ կախեց անդունդը: Այդ այն նպատակով արաւ, որ պարանը ճամփին քարի շառնի: Յանկարծ անդունդի խորքից լսեց մանկան ձայնը.

—Պարանի ծայրը այստեղ է, շուտով ես կը բարձրանամ:

Պարանը կախել էր ժայռի կրճքովը և նրանով կարելի էր վեր բարձրանալ, ոտները դէմ արայ տալով, բայց դարձեալ շատ դժար էր և երկիւղալի: Մայրը ընկաւ ծնկներին, ձեռքերը խաչեց և ջերմ աղօթում էր որդու ազատութեան համար: Երկու բանւորը մի ցից խփեցին գետնին, նրա վրա փաթաթեցին

պարանի ծայրը, որ ցիցը չը շարժւի, և իրենք էլ պարանից բռնած կանգնել էին: Լեռնականը լարւած ուշադրութեամբ նայում էր դէպի անդնդաձորը: Ահա երևաց մանկան գլուխը, բայց մանուկը գունատեց մեռելի պէս. նա վատացաւ, ձեռքերը բաց թողին պարանը և նա անշուշտ կընկնէր անդունդը, եթէ լեռնականը չըբռնէր նրա շորերից և դուրս չըքաշէր չըհանէր նրան ձորի բերանը: Երեխան ուշքից գնաց: Նրան դրին կանաչի վրա. մայրը լաց լինելով տրորում էր նրա քնարերակները, համբուրում էր նրան, տաքացնում էր նրան իր շնչով, սեղմում էր սրտին և ամեն կերպ աշխատում էր կենդանացնել նրան: Ռայլֆը ինչով կարողանում էր օգնում էր, այսինքն լիզում էր Գէորգի ձեռքերն ու հաչում էր:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ Գէորգը բացեց աչքերը, բայց այնքան թոյլ էր, որ չէր կարողանում խօսել: Երբոր քիչ կազդուրւեց, արտասուեցն աչքերին մօրից ներողութիւն խնդրեց: Նրան ձեռքերի վրա առած տուն բերին, այդ աստիճան ուժասպառ էր եղել պարանով վեր բարձրանալիս, դրա վրա աւելացրու և այն երկիւղը, որ զգացել էր այդ ժամանակ:

Շուտով Բայրոնի վիճակը փոխեց. նրա ազգականներից մէկը, հարազատ հօրեղբայրը—լորդ Բայրոնը,—մի հարուստ և անւանի մարդ, մեռաւ անժառանգ, իրենից յետոյ որդի չը թող-

ներով: Անգլիական օրէնքով, եթէ որդի չըկայ, մօտիկ ազգականն է ժառանգում մեռնող լորդի բոլոր իրաւունքները, ամբողջ կարողութիւնն ու ազնւական կոչումը: Գէորգ Բայրոնն էր նրա ժառանգը, այդ պատճառով նրա կարողութիւնը և լորդի կոչումը հասաւ նրան: Նա պէտք է բաժանէր Աբերդինից, իր սիրելի սարերից, ջրովէժներից, շաւիղներից և զառիվայրներից: Նրան տեղաւորեցին գիշերօթիկ դպրոցում: Նա էլ չը վերադարձաւ Աբերդին, բայց ամբողջ կեանքում Շոտլանդիայի սարերի յիշողութիւնը մնում էին նրա մէջ, և յաճախ նա խօսում էր նրանցից և նկարագրում նրանց:

Ռայլֆը միշտ մնաց Բայրոնի հետ և լաւ ապրուստ ունէր: Եւ երբոր վերջապէս նա ծերութիւնից մեռաւ, Բայրոնն արդէն հասակն առած մարդ էր, արդէն յայտնի էր իր բանաստեղծական գրւածքներով: Բայց Ռայլֆի կորուստը նրան խորը վշտացրեց և նա հաւատացնում էր, որ զրկւեց մի այնպիսի ընկերից, որն իր կեանքը ազատել էր:



16. Բ. Կիպլինգ — Կոտուկօ պատմաւածք թարգ. Նիկ. Սարգսեան . 5 »
17. Դր-Ամիչիս — Կարմիր մեխակ, պատմաւածք, թարգմ. Բ. Վարդանեան . 8 »
18. Աղաքաւ — Թուխը, մանկ. հեքիաթ . 12 »
19. Սօֆիա Գալաչեան — Այգեպանի մօտ . 10 »
20. Ուիլյա — Տափաստանը, պատ. . 10 »
21. Ս. Տէր-Աւետիքեան — Ուխտաւորները, Անտոնի դիւտը . 8 »
22. Ս. Ս. — Պատահական ընկերութիւն . 4 »
23. Եփրեմ Սարգսեան — Փոթկանը . 4 »
24. Ինֆանցիել Թշնամիներ թարգ. Սօֆ. Գալաչեանի . 8 »
25. Կ. Մետրուպոլիսի — Զուրը, պատմաւածք . 4 »
26. Ա. Խնկոյեանի — Քարացած Բոյրը, հեքիաթ . 8 »
27. Աղաքաւ — Հորթաբաժ Մուսին պօչմա . 15 »
28. Բայրոնն ու իր շունը, թարգ. Ա. Թ. Խնկոյեան . 5 »



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Գրվել «Հասկերի» խմբագրութեան. Թիֆլիս,
редакция „Аскеръ“.

417

825

12-26